ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը

Հաստատում եմ
Տնօրեն Դ. Կոստանդյան
«15» 05 2023թ.

ԽՄԲԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ (ՆԵՐԻ) ԱՆՎԱՆՈՒՄԸ *Արվեստ*
ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ *Թատրոն*

ԾՐԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿ *Սոնա Հարությունյան*

Քննարկվել, հավանության է արժանացել «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի 15.05.2023թ նիստում: Արձանագրություն թիվ 5 :

Քննարկվել, հավանության է արժանացել
հումանիտար առարկաների
մեթոդմիավորման 12.05.2023թ նիստում: Արձանագրություն թիվ 10 :

Մեթոդմիավորման նախագահ _____ Դանիելյան Մ.
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ _____ Ավանեսյան Ս.
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Մաս. կրթ. աջակցության գծով գծով տնօրենի տեղակալ _____ Գևորգյան Ա.
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

2023թ.

ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ *«ԹԱՏՐՈՆ»*

ԽՄԲԱԿԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝
ՀԻՄՆԱԿԱՆ (ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ), 5-9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

ԽՄԲԱԿԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝
Շաբաթական 1 դասաժամ
Ընդհանուր տևողությունը՝ 34 դասաժամ, որից՝ 6 դասաժամ տեսական
28 դասաժամ գործնական

ԽՄԲԱԿԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐԸ՝
«Թատրոն» խմբակի պարապմունքները նպաստում են սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացմանն ու ամրապնդմանը՝ մանկական թատրոնի նպատակից ու խնդիրներից, թատերական խաղերի և ներկայացումների առանձնահատկություններից ու դրանց դրսևորման ձևերից, իրենց գործունեությունը թատերականացնելու հնարքներից, դրանք իրականացնելու մեթոդներից, սցենարներ գրելու և բեմադրել կարողությունից, էտյուդներ, խաղարկային իրավիճակներ բեմադրելու, դրանցում խաղալու կարողությունից, հայ հեքիաթագիրներ Հովհաննես Թումանյանի, Ղազարոս Աղայանի հեքիաթներից, ինչը կնպաստի նաև «Կերպարվեստ», «Երաժշտություն», «Ազգային երգ ու պար», «Գրականություն» առարկաների դասավանդման ընթացքում ձեռք բերած գիտելիքների և հմտությունների ամրապնդմանը: Աշակերտների մոտ կզարգանան հանրակրթական պետական չափորոշչի հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող հետևյալ վերջնարդյունքները. վերլուծի և ընկալի տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանա դրանց հիմնական գաղափարը (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով) (ՀՊՉ Հ-1), հայերեն ազատ զրուցի իրեն հետաքրքրող թեմաների մասին, կառուցի ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառի ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով) (ՀՊՉ Հ-2), որոշի խնդրի լուծման համար անհրաժեշտ տեղեկույթը, գտնի խնդիրների լուծման ստեղծագործ մոտեցումներ և համեմատի դրանք (ՀՊՉ Հ-7), գնահատի իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները, վերլուծի պատճառահետևանքային կապերը և կայացնի որոշումներ (ՀՊՉ Հ-25), ցուցաբերի իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողություններ (ՀՊՉ Հ-26), ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ (ՀՊՉ Հ-29), ընկերակցի, դրսևորի բաց և դրական վերաբերմունք այլոց հանդեպ, համագործակցի և հաղորդակցվի տարբեր ձևաչափերով, ակտիվորեն լսի և հարգանքով վերաբերվի այլ մարդկանց տեսակետներին և գաղափարներին (ՀՊՉ Հ-34), դրսևորի մշակութային ընկալման և արժևորման կարողություններ, արվեստի որոշ տեսակներում ստեղծագործական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ (ՀՊՉ Հ-42), ճանաչի ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր, արվեստի միջոցով ստեղծագործաբար արտահայտի իր գաղափարները և հույզերը (ՀՊՉ Հ-43), ճանաչի տարբեր ժամանակաշրջանների, ազգերի և մշակութային-գաղափարային խմբերի արժեքները, բացատրի դրանց ազդեցությունն ու արտացոլումը տեղական և համաշխարհային մշակույթի մեջ (ՀՊՉ Հ-44), ճանաչի և արժևորի իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ (ՀՊՉ Հ-45):

ԽՄԲԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ
Ընդայնել աշակերտների մտահորիզոնը, զարգացնել գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը, խոսքի կուլտուրան, ձևավորել և մշակել թատրոնի տարբեր դրսևորումների կիրառման, կերպավորման–կերպարանափոխման հմտություններ: Դպրոցում թատրոնը որպես երեխայի բազմակողմանի զարգացման, կրթման միջոց օգտագործելու կարողության ձևավորում և զարգացում:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս դասընթացն ուսումնասիրելուց հետո աշակերտը պետք է՝

1. Իմանա մանկական թատրոնի նպատակն ու խնդիրները, թատերական խաղերի և ներկայացումների առանձնահատկություններն ու դրանց դրսևորման ձևերը
2. Իրականացնի իրենց գործունեությունը թատերականացնելու հնարքներ և դրանք իրականացնելու մեթոդներ
3. Կարողանա սցենարներ գրել և բեմադրել: Կարողանա էտյուդներ, խաղարկային իրավիճակներ բեմադրել, խաղալ դրանցում (կերպավորել, կերպարանափոխել):

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Մանկական թատրոնի նպատակն ու խնդիրները, թատերական խաղերի և ներկայացումների առանձնահատկություններն ու դրանց դրսևորման ձևերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝

1. Գիտի մանկական թատրոնի նպատակն ու խնդիրները
2. Գիտի ներկայացնում երեխաների «թատերական գործունեության» արդյունքում լուծվող մանկավարժական, հոգեբանական, իմացական խնդիրները
3. Ճիշտ է ներկայացնում թատերական խաղերի, ներկայացումների տեսակներն ու ժանրերը, դրանց տարբերություններն ու նմանությունները
4. Կարողանում է գրական և բանահյուսական ստեղծագործություններով շարժուն խաղեր հորինել՝ հաշվի առնելով զարգացնող, շարժուն և խաղարկային խաղերի առանձնահատկությունները
5. Կարողանում է ներկայացնել իր գործունեության մյուս ձևերի (կերպարվեստ, երգ-պար, մարմնակրթություն, տեխնոլոգիա…) ինտեգրումը թատերական տարբեր ներկայացումներ և խաղեր կազմակերպելիս

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով: Ուսուցման ընթացքում աշակերտը կազմում է տարբեր խաղերի միջոցով գրական ստեղծագործություններ ուսուցանելու նախագծեր, դրանք իրականացնում է խմբում:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե աշակերտն իրականացնում է 3 նախագիծ՝ մեկ հեքիաթ, մեկ բանաստեղծություն և այլ ժանրի մեկ ստեղծագործություն:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանքներ: Դասավանդման համար անհրաժեշտ է թատրոնին վերաբերող բաժնով գրականություն, հեքիաթներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական՝ 3 դասաժամ

Գործնական՝ 8 դասաժամ

Արդյունք 1.		*ԸՆԴՀ.*	*ՏԵՍ.*	*ԳՈՐԾ.*
1.1	Մանկական թատրոնի նպատակներն ու խնդիրները	1	1	
1.2	Երեխաների «թատերական գործունեության» արդյունքում լուծվող մանկավարժական, հոգեբանական, իմացական խնդիրները	1		1
1.3	Թատերական խաղերի և ներկայացումների առանձնահատկությունները	1	1	
1.4	Թատերական խաղերի, ներկայացումների տեսակները, տարբերությունները	1		1
1.5	Տիկնիկային ներկայացում	1		1
1.6	Դերային խաղերը՝ ըստ երեխաների սեռական առանձնահատկությունների	1	1	
1.7	Դերախաղի կարևորությունը միջանձնային հարաբերություններում	1		1

1.8	Երեխաների գործունեության ձևերի ինտեգրումը թատերական տարբեր ներկայացումներ, խաղեր կազմակերպելիս	1		1
1.9	Երեխան որպես հերոս	1		1
1.10	Հանպատրաստից դերային խաղ	1		1
1.11	Դերային և սյուժետային խաղ	1		1
	Ընդամենը	*11*	*3*	*8*

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իրականացնում են իրենց գործունեությունը թատերականացնելու հնարքներ և դրանք իրականացնելու մեթոդներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝

1. Գիտի իրենց թատերական գործունեությունը կազմակերպելու տարբեր մեթոդներ և հնարքներ
2. Կարողանում է թատերական միջոցներով՝ էտյուդ, խաղ, ներկայացումներ, մնջախաղ, կրթական, սոցիալական, հոգեբանական տարբեր խնդիրներ լուծել

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Խմբակի մյուս աշակերտների հետ փոքրիկ էտյուդներ է բեմադրում՝ ներկայացնելով իրենց կենցաղը, առօրյան, տարբեր այլ իրավիճակներ: Արդյունքը համարվում է յուրացված, եթե աշակերտը ակտիվորեն է մասնակցում նման էտյուդների իրականացմանը:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Գործնական աշխատանքներ, ներկայացումներ: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական՝ 1 դասաժամ

Գործնական՝ 4 դասաժամ

Արդյունք 2		*ԸՆԴՀ.*	*ՏԵՍ.*	*ԳՈՐԾ.*
2.1	Գործունեությունը թատերականացնելու հնարքներ և դրանք իրականացնելու մեթոդներ	1		1
2.2	Մեթոդների դերը և նշանակությունը թատերական գործունեության կազմակերպման մեջ	1	1	
2.3	Թատերական միջոցներ	1		1
2.4	Մնջախաղ	1		1
2.5	Էտյուդներ	1		1
	Ընդամենը	*5*	*1*	*4*

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանալ սցենարներ գրել և բեմադրել: Կարողանալ էտյուդներ, խաղարկային իրավիճակներ բեմադրել, խաղալ դրանցում (կերպավորել, կերպարանափոխել)

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝

1. Ծանոթ է սցենար գրելու տեխնիկային
2. Կարողանում է ցանկացած գրական կամ բանահյուսական նյութ վերածել սցենարի
3. Սցենար գրելիս կարողանում է ստեղծագործական տարբեր հնարքներ կիրառել
4. Կարողանում է փոքր ծավալի նյութը (առած-ասացվածք, առակ, երգ, հանելուկ…) դարձնել խաղարկային
5. Կարողանում է տարբեր ծեսերի, միջոցառումների (նաև՝ սպորտային), խաղերի, տոնակատարությունների սցենարներ գրել
6. Կարողանում է բեմադրել իր կամ այլ սցենարներ
7. Կարողանում է տարբեր իրավիճակների վերաբերյալ էտյուդներ ստեղծել և խաղալ խմբի մյուս աշակերտների հետ
8. Կարողանում է կերպավորել ցանկացած առարկա, երևույթ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի, ներկայացման միջոցով: Ուսումնառության ընթացքում աշակերտը խմբի մյուս աշակերտների հետ իրականացնում է մեկ ներկայացում, մեկ տիկնիկային ներկայացում և առավել տարածված ազգային ծեսեր՝ «Զատիկ», «Ծաղկազարդ», «Համբարձում»:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե աշակերտը ներկայացնում է 1 ծեսի և 1 ներկայացման ծրագիր, խմբի մյուս աշակերտների հետ իրականացնում է դրանք, մասնակցում է խմբի մյուս աշակերտների կազմակերպած ծեսերին և ներկայացումներին, եթե աշակերտը մասնակցում է ուսուցման ընթացքում բեմադրվող էտյուդներին, թատերական խաղերին, ինքն է խաղում և էտյուդներ բեմադրում:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանքներ: Իրականացման համար անհրաժեշտ է ունենալ տեսական գրականություն, ազգագրական գրականություն, տարբեր նյութեր՝ ձևավորումների համար, ձայնագրություններ, տեխնիկական միջոցներ՝ ձայնարկիչ, ֆոտոխցիկ, պրոյեկտոր, խաղերի, աշակերտների կազմած մանկական և թատերական խաղերի հավաքանիներ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական՝ 2 դասաժամ

Գործնական՝ 16 դասաժամ

Արդյունք 3		*ԸՆԴՀ.*	*ՏԵՍ.*	*ԳՈՐԾ.*
3.1	Սցենար, սցենար գրելու տեխնիկա, սցենարական վարպետություն	1	1	
3.2	Ստեղծագործական տարբեր հնարքների կիրառումը, մտահղացման ձևակերպում	1	1	
3.3	Առակը, երգը, հանելուկը դարձնել խաղարկային	1		1
3.4	Միջոցառումների սցենարներ	1		1
3.5	Խաղերի սցենարներ	1		1
3.6	Իր ստեղծած սցենարների բեմադրում	1		1
3.7	Հովհաննես Թումանյանի հեքիաթներից բեմադրում	6		6
3.8	Ղազարոս Աղայանի հեքիաթներից բեմադրում	6		6
	Ընդամենը	*18*	*2*	*16*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Բ. Հովակիմյան, Թատերական օրացույց 2010, Երևան
- Էլիզաբեթ Ադիկյան, Խաղեր, 2022
- Обухова Л. Ф. Детская (возрастная) психология, Учебник – М. Российское педагогическое агентство, 1996
- Кон И. С. Ребенок и общество. Учебное пособье. Москва, 2003
- «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն», խմբագիր Ա. Վ. Պետրովսկի, Երևան 1977
- Հայ թատրոնի պատմություն XIX դար, Հենրիկ Հովհաննիսյան
- Էդուարդ Բագրատի Աղայան, Արդի հայկերենի բացատրական բառարան, Երևան 1976
- Նախաշավիղ, Ի. Խանամիրյան
- Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, ձեռնարկ
- Սիրամարգ Վարդումյան, Ուսումնամեթոդական ձեռնարկ, 2007
- Մնջախաղ, ՀՀ հանրագիտարան
- Հին և նոր Երևան, պատմական տեղեկագիր-ուղեցույց, թատրոններին նվիրված գլուխ
- Մելս Սանթրոսյան, Գրականագիտական բառարան, Երևան, 2009
- «Գժուկ» երգիծական հանդես, 2011
- Սիլվա Պապիկյան, Թատերագիտական և կինոմատոգրաֆիական տերմինների համառոտ բառարան, Երևան 2015
- Գ. Գրիգորյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան 1967
- Պ. Հակոբյան, Առակների տեսությունը միջնադարյան Հայաստանում
- Նավասարդյանց Տ. Հայ ժողովրդական հեքիաթներ, Թիֆլիս 1882-1903
- Հարությունյան Ս. Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան 1965
- Ա. Ղանալանյան, Հայ ժողովրդական հեքիաթները
- Գ. Գրիգորյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան 1967
- Ղ. Աղայան 2005, «Մանուկ խան», «Եղեգնուհի» հեքիաթներ